



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի արևելքում: Մարզը սահմանակից է ՀՀ Տավուշի և Լոռու (հյուսիսում), Կոտայքի և Արարատի (արևմուտքում) և Վայոց Ձորի մարզերին (հարավում), ինչպես նաև Ադրբեջանին (արևելքում): Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115կմ, արևմուտքից-արևելք՝ 85կմ: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, ճամբարակի (նախկին Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզկենտրոնն է Գավառ քաղաքը, որը գտնվում է Երևանից 92կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Մարզի տարածքը կազմում է 5348 քառ. կմ, որից գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունը կազմում է 240.033 հազ.հա: Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաքային՝ Գավառ, ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր:



Մարզի տարածքը, որն հիմնականում կազմում է Սևանա լճի ջրահավաք ավազանը, ծովի մակերևույթից գտնվում է 1600-ից մինչև 3597 մետր բարձրության վրա: Մարզը գոտևորում են Գեղամա, Վարդենիսի, Արեգունու, Արեւելյան Մեւանի, Մեւանի եւ Փամբակի լեռնաշղթաները: Ամենաբարձր լեռնագագաթը Աժդահակն է՝ 3597 մետր:

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325մ):

Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555մ), Վարդենիսը (3522մ), Գեղասարը (3446մ): Ամենաերկար գետերն են Արգիշտին (51կմ), Գավառագետը (47կմ) և Մասրիկը (45կմ), առկա են նաև խառնարանային լճեր Աժդահակ և Աղմաղան (մինչև 50մ տրամագծով և 15մ խորությամբ): Գեղարքունիքի մարզում է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1898մ). եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի ավազանի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 5 հազ. քառ. կմ. լճի հայելու

մակերեսը 1.2 հազ. քառ. կմ. ծավալը 35.8 մլր. խմ: Այն ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում գործում է 292.2կմ միջպետական, 110.8կմ հանրապետական 312,6կմ մարզային նշանակության և 141,9կմ համայնքային ենթակայության ճանապարհներ: Մարզի տարածքում է անցնում Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական մշանակության մայրուղին: Մարզի բոլոր 5 քաղաքներից մինչև մայրաքաղաք ամեն օր գործում է հասարակական տրանսպորտ:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան Ազգային Պարկը» (կազմավորվել է 1978թ-ին): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ. հա. որից 24.9 հազ. հա. առափնյա ցամաքային տարածքներ են: Այն շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:



Գյուղատնտեսություն

Զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: 42.000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում տարեկան արտադրվում է 230.000 տոննա կարտոֆիլ, 250.000 տոննա անասնակեր, 35.000 տոննա կաղամբ, 60.000 տոննա հացահատիկ, 7.000 տոննա պտուղ, 80.000 տոննա կաթ, 14.300 տոննա միս, 241 տոննա բուրդ: Անասնապահական տնտեսություններում պահվում է 107.000 գլուխ խոշոր, մանր եղջերավոր անասուն: Հեռանկարային են համարվում հանքահումքային, սննդի և թեթև արդյունաբերության ոլորտները: Վերջին տարիների ընթացքում վերաշահագործվել են Սոթքի ոսկու, Արդանիշի կրաքարի հանքավայրերը, հնդկական «Սթերլայթ», հայկական «Միկա-ցեմենտ» ընկերությունների կողմից: Գորգագործական արտադրամասեր են գործում Մարտունի, Սևան, Ճամբարակ քաղաքներում և Կարմիր գյուղում: Մեծ համբավ

ունեցող գորգերը արտադրվում, արտահանվում և իրացվում են ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում: Գորգագործության զարգացման հիմնական ներդրողներն ու կազմակերպիչները «Թուֆենկյան հիմնադրամ» և «Մեգերյան եղբայրներ» ընկերություններն են:

Ալայյան բազմազան բուսաշխարհը նպաստավոր է մեղրի արտադրության համար: Մեղվաբուծությամբ զբաղվում է մոտ 500 տնտեսություն՝ տարեկան արտադրելով մոտ 300 տոննա մեղր: Սևանի ավազանի բուսաշխարհի մեջ բացառիկ նշանակություն ունի փշարմավը, որի պտուղն օգտագործվում է ինչպես սննդի, այպես էլ գիտական և ժողովրդական բժշկության մեջ: Սևանա լճում արդյունագործական նշանակություն ունեն սիգ, ծածան ձկնատեսակները եւ խեցգետինը:



Գեղարքունիքի մարզում մշակվող հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկային մշակաբույսեր (44 102 հա, որը կազմում է մարզի ընդհանուր ցանքատարածությունների 62.3%), կարտոֆիլ (14 786 հա, 18.4%), բանջարեղեն (2 092 հա, 2.3%): Վերջին տարիներից առաջընթաց է գրգացվում նաև հատիկալընդերային մշակաբույսերի մշակությունը Գեղարքունիքի մարզում արմատավորելու գործում (ոլոռ, սիսեռ, ոսպ), որոնք իրենց տնտեսական արդյունավետությամբ 3-4 անգամ գերազանցում են հացահատիկային մշակաբույսերին:

Աղյուսակ 1. ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական համախառն արտադրության կառուցվածքը 2014թ.-ի դրությամբ

	Ցանքային տարածությունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն 3:սյուն2)
Գյուղատնտեսական մթերքների անվանումը	1	2	3	4
Հացահատիկ	44 102	44 102	1 413 135	32
Կարտոֆիլ	14 786	14 786	3 626 737	245,3
Բանջարեղեն	2 092	2 092	640 948	306,4

Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետության կարտոֆիլ արտադրող կարևոր տարածաշրջաններից մեկը: Վերջին երկու տարիներին կարտոֆիլի ցանքատարածությունները կրճատվեցին, որը հետևանք էր կարտոֆիլի իրացման ցածր գների: Սակայն կարտոֆիլի մշակության ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ (սորտաթարմացում, ոռոգում, պարարտանյութերի օպտիմալ չափաքանակի կիրառում և վնասատուների դեմ արդյունավետ պայքար) 1 հեկտարի միջին բերքատվությունը 2006թ-ի 171ց-ից 2010 թ-ին հասավ 181ց-ի, 2014թ-ին՝ 245ց-ի:



Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում, որտեղ գրեթե ամեն տարի անպակաս են տարերային աղետները: Ցրտահարություն, կարկտահարություն, տևական երաշտ, հեղեղումներ, ահա այն ոչ լրիվ ցանկը, որոնց հետևանքով գրեթե ամեն տարի մարզի ազգաբնակչությունը տուժում է:

Սևանա լիճը գոտևորող անտառներում չիչխանի մեծ պաշարներ կան: Սակայն ոչ մի կերպ մարզում չի կառուցվում չիչխանի վերամշակման արտադրամասեր, մինչդեռ այս բնագավառում կարելի է օգտագործել մեծ թվով աշխատուժ, ստանալ արժեքավոր հյութ և բուժիչ յուղ:



Գեղարքունիքի մարզը մասնագիտացված է կաթնա և մսամթերային անասնապահության ոլորտում: Մարզի անասնազխաքանակի տեսակարար կշիռը հանրապետության մեջ միջինում կազմում է 16-18%: Մարզի թվով 5

տարածաշրջաններում գործում են կաթի ընդունման 35 կետեր, որտեղ ընդունվում է գյուղացիական տնտեսություններում արտադրված կաթը: Մի շարք մասնագիտացված պանրագործարաններում, հարմարեցված արտադրամասերում արտադրվում է բարձրորակ «Լոռի», «Չանախ» պանիրները, որոնց պահանջարկը հանրապետության շուկաներում բավականին բարձր է:



Վերջին տարիներին մարզի տարածաշրջաններում լայն թափ են ստացել նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը: Մարզի վիճակագրական տվյալներով թռչունների գլխաքանակն արդեն հասնում է 230 հազարի իսկ մեղվաբնտանիքներինը՝ 36 հազարի: Արդեն պատշաճ ուշադրություն է դարձվում հատկապես այծաբուծությանը: Այս ճյուղի զարգացման արդյունքում արդյունավետ կօգտագործվեն հեռագնա և դժվարամատչելի արոտավայրերը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Սյունիքի մարզը ՀՀ ստրադեգիական նշանակություն ունեցող մարզերից է: Այն ընդգրկում է Մեղրու, Կապանի, Գորիսի և Սիսիանի նախկին վարչական շրջանները: Սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը, Արցախի Հանրապետությանը, Վայոց Ձորի մարզին և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Այն միացնում է ՀՀ և Իրանի պետական սահմանները:

Նախկինում այդ տարածաշրջանով է անցել Երևան-Բաքու մայրուղին և երկաթուղին: Ներկայումս այդ երկու կարևոր ուղիները փակ են:

Մարզը իր տարածքով հանրապետության խոշոր տարածաշրջաններից մեկն է: Այն ձևավորվել է 1995թ-ին և ունի 4506 քառ. կմ տարածք: Մարզկենտրոնը քաղաք Կապանն է: Իր տարածքով ամենամեծը լինելով հանդերձ կազմում է ամբողջ տարածքի 15%-ը, իսկ հանրապետության բնակչության՝ 4%-ը: Ունի 135 բնակավայր, որից 105-ը համարվում են լեռնային, սահմանամերձ և բարձր լեռնային սահմանային: Հանրապետության առաջին մարզն է, որտեղ քաղաքային բնակչությունը ավելի շատ է, քան մյուս մարզերում: Մարզը քաղաքաբնակների թվով զիջում է միայն Երևանին:



Որպես արդյունաբերական շրջան աչքի են ընկնում Քաջարանի և Ագարակ քաղաքները, որոնք աչքի են ընկնում պղնձամոլիբդենային հանքավայրերով:

Գյուղատնտեսություն

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.5%-ը: Դրանց մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 47.7%, և վարելահողերը՝ 14.2%: Մարզի 44.8 հազ հա վարելահողերից 2012թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսություններն օգտագործել են 33.5 հազ. հա, որից 22.6 հազ. հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 7.1 հազ. հա վարելահող, որից 2.8 հազ. հա սեփականաշնորհված է: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում բարձրադիր գոտում են և ունեն մեծ թեքություններ:

Մարզն ունի անասնապահության (կաթ, միս) և բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ) արտադրության ուղղություն: Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ՝ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների համար:

Հացահատիկային մշակաբույսերի ցանքային տարածությունների ցուցանիշով Սյունիքի մարզը հանրապետությունում զբաղեցնում է 4-րդ տեղը՝ Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի մարզերից հետո:

Աղյուսակ 2. Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում և Սյունիքի մարզում 2014թ.-ի տվյալներով

	Ցանքային տարածությունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն 3:սյուն2)
Ա	1	2	3	4
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	188 695	185 760	5 905 586	31.8
Գեղարքունիք	44 102	44 102	1 413 135	32
Շիրակ	43 913	40 985	1 212 498	29,6
Արագածոտն	26 261	26 261	817 333	31,1
Սյունիք	24 311	24 311	736 577	30,3

Վերջին տարիներին մարզում զբաղվում են նաև կարտոֆիլագործությամբ, որի մեծ մասը բաժին է ընկնում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններին: Իր ցուցանիշով Սյունիքի մարզը հանրապետությունում զբաղեցնում է 4-րդ տեղը:

Աղյուսակ 3. Կարտոֆիլի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում և Սյունիքի մարզում 2014թ.-ի տվյալներով

	Ցանքային տարածությունը, հա	Ընդ. բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հա-ի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն 3:սյուն2)	Բացի այդ հավաքած է բերք կրկնակի, միջշաքային ցանքերից, ցենտներ	Ընդ. հավաքված է բերք, ցենտներ (սյուն3+սյուն5)
Ա	1	2	3	4	5	6
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	31 552	31 552	7 327 255	232,2	4 352	7 331 607
Սյունիք	1 728	1 728	328 326	190	-	328 326

Միաժամանակ՝ մարզի տարածքը, ունենալով տարբեր գոտիներ՝ ցածրադիրից մինչև բարձրադիր, ալպիական և մարգագետնային արոտավայրեր, բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու համար: 2013թ հունվարի 1-ի դրությամբ՝ մարզում պահվում էր 42019 մեղվաբնտանիք (2010թ. նկատմամբ աճը՝ 12.3%):

Ինչպես ողջ հանրապետությունում, Սյունիքի մարզում ևս բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության ու տնկարանային տնտեսության զարգացումն է՝ բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա, ինչը նաև ՀՀ պարենային անվտանգության ապահովման վճռորոշ գործոններից է:

Մարզում պտղաբուծության զարգացումը մշտապես գտնվել է ուշադրության կենտրոնում, նույնիսկ խաղաղագործության զարգացման հնարավորություններ կան Գորիսի և Մեղրիի տարածաշրջաններում:

Պետք է նկատի ունենալ, որ տարածաշրջանի հողատեսքերը քարքարոտ և ծանր հողեր են, հետևաբար պետք է մեծ լինի թրթուրավոր տրակտորների թիվը: Մարզում կա շուրջ 950 թրթուրավոր տրակտորներ, սակայն դրանց նորացման աստիճանը բավականին ցածր է և շահագործման դեպքում ծախսերը բավականին բարձր են:

Մյուս կարևոր ճյուղը անասնաբուծությունն է, որի զարգացման համար առկա են արտադրական և տնտեսական հնարավորությունները: Մարզում կատարված անասնագլխաքանակի վերջին հաշվառման տվյալներով կա 50 հազ. 659 խոշոր և 64 հազ. 964



մանր եղջերավոր անասում: Խոզերի քանակը 6321 է: Անասնաբուծության ճյուղում արտադրված մթերքները հիմնականում բավարարում են ներքին պահանջները և այս ճյուղի եկամուտների հաշվին ապահովում է նաև բնակչության անհրաժեշտ եկամուտների ծավալները:

Մարզի կարևոր խնդիրներից են անասնաբուծական և բուսաբուծական մթերքների իրացումը: Բուսաբուծական մթերքների իրացման համար չկան խոշոր

վերամշակող ձեռնարկություններ: Անասնաբուծական մթերքների իրացման և վերամշակման համար ստեղծված են փոքր արտադրամասեր և ձեռնարկություններ կաթի վերամշակման և երշիկի արտադրության ուղղությամբ, երշիկի և մսի իրացման և վերամշակման գծով՝ Կապանի տարածաշրջանում:

Մարզում աջակցության ծրագրեր են իրականացնում ՄԱԿ-ի Հայաստանյան Գրասենյակը, Համաշխարհային Բանկը, Գյուղատնտեսական Զարգացման Միջազգային Հիմնադրամը:

Շատ կարևոր է նաև հաշվի առնել տարածաշրջանի հնարավորությունները, ինչպես աշխատուժի օգտագործման, այնպես էլ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման առումով: Այս տեսակետից ելնելով կարևոր ռեսուրս է համարվում ջրային ռեսուրսները: Սյունիքի մարզում հիմնական և մեծ պաշար ունեցող գետերից մեկը Որոտանն է՝ իր վտակներով, որը սկիզբ է առնում Միսիանի տարածաշրջանից: Որոտանի վրա կառուցված է 3 խոշոր ջրամբարներ՝ Սպանդարյան, Տոլորս, Շամբի (նկարում) և 3 հիդրոկայաններ՝ Սպանդարյան, Շամբի, Տաթև:

Այս ռեսուրսները հնարավորություն են տալիս մի կողմից պայմաններ ստեղծել բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը, մյուս կողմից՝ արտադրության ծավալների ավելացմանը:

Սյունիքի մարզում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտները ունեն տարբեր մասնագիտացման ուղղություններ, որոնք պայմանավորված են տվյալ տարածաշրջանի առանձնահատկություններով: Առանձնահատկություններից կախված փոխվում են նաև քաղաքականության ուղղությունները:



Տարածաշրջանում ռեսուրսների առկայության տեսանկյունից աչքի են ընկնում Միսիանի և Գորիսի տարածաշրջանները, որտեղ բուսաբուծության հիմնական ճյուղը հացահատիկի արտադրությունն է, հետևաբար քաղաքականությունը պետք է տարվի սերմնաբուծության զարգացման և վարելահողերի արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Անասնաբուծության զարգացման ուղղությամբ ուշադրություն պետք է դարձվի բարձր մթերատու և ցեղային հատկանիշներ ունեցող կենդանիների բուծումը: Այս առումով իրականացվում է արոտների օգտագործման, ոչխարաբուծության զարգացման և անասնապահական մթերքների վերամշակման ուղղությամբ: Չնայած Սյունիքում հողային ռեսուրսների չափերի մեծությանը, համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ-ում կազմում է 5,7%, որը ցույց է տալիս, որ ճիշտ քաղաքականության մշակման հետևանքով կարող է կրկնապատկվել:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ



Տարածքը	3 798 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	12.8 %
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Գյուղատնտեսական նշանակության հողեր	251 154 հա
այդ թվում՝ վարելահողեր	42 075 հա հա
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	228.0 հազ. մարդ/

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ և բնակչության թվաքանակով երրորդն է հանրապետությունում: Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արևմուտքից Շիրակի, արևելքից Տավուշի, հարավից Կոտայքի և Արագածոտնի մարզերին: Սահմանամերձ բնակավայրերն են Արծնի, Ապավեն, Ձորամուտ, Պաղաղբյուր և Զիլիգա: Մարզի տարածքով է անցնում Թբիլիսի-Երևան երկաթուղու մի հատվածը:

ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ քաղաքները:

Մարզկենտրոնը Վանաձոր քաղաքն է (նախկին Կիրովական), որը մեծությամբ հանրապետության երրորդ քաղաքն է: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115կմ է, երկաթուղով՝ 224կմ:

Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը՝ Ձորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով: Հարուստ է նաև հանքային աղբյուրներով: Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները:

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում:

Գյուղատնտեսություն

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Գյուղատնտեսությունը անկախությունից հետո որաշակի նահանջ ապրեց և առավել ծանր վիճակի մեջ ընկավ մինչև այդ՝ 1988թվականին տեղի ունեցած երկրաշարժի պատճառով:

Մարզում յուրաքանչյուր տարի ցանվում է շուրջ 14,000 հա հացահատիկ, 5,000-6,000 հա կարտոֆիլ, 1,500 հա բանջարեղեն, 12,000 հա բազմամյա և միամյա կերային մշակաբույսեր, որոնց միջին բերքատվությունը հաճախ գիջում է հանրապետության



միջին ցուցանիշներին: Պատճառները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների բացակայությունը, սերմերի ցածր որակը, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը:



**Աղյուսակ 4. ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական համախառն արտադրության
կառուցվածքը 2014թ.-ի դրությամբ**

	Ցանքային տարածու- թյունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարա- ծությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվու- թյունը, ցենտներ (սյուն3:սյուն2)
Գյուղատնտեսական մթերքների անվանումը	1	2	3	4
Հացահատիկ	12 434	12 427	415 852	33,5
Կարտոֆիլ	4 016	4 016	732 512	182,4
Բանջարեղեն	1 489	1 489	269 871	181,2



Կարտոֆիլի արտադրության ծավալներով մարզը հանրապետությունում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Գեղարքունիքի և Շիրակի մարզերից հետո: Յուրաքանչյուր տարի մարզում ցանվում է 4-5 հազ. հա կարտոֆիլ, սակայն տարեցտարի այդ ցուցանիշը նվազում է: Ցանքերի կրճատման պատճառը կարտոֆիլի իրացման շուկայի բացակայությունն է և ներկրվող բարձրորակ տնկանյութի բարձր գները: Արտադրված կարտոֆիլի իրացման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել վերամշակման արտադրամասեր և սառնարանային տնտեսություններ:

Յուրաքանչյուր տարի ցանվում է 1,250-1,500 հա բանջարանոցային մշակաբույսեր: Դրանց մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում կաղամբը, լոբին, վարունգը և լոլիկը:

ՀՀ Լոռու մարզը մասնագիտացված է կաթնամսային անասնաբուծությամբ: Խոշոր եղջերավորների և խոզերի գլխաքանակը վերջին տարիների միջին տվյալներով կազմել է Հանրապետության համապատասխանաբար 12.3%-ը և 8.13%-ը, իսկ մսի իրացումը և կաթի արտադրությունը՝ 11.7%-ը և 12.7%-ը: Մարզում նկատվում է ինչպես գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, այնպես էլ անասնապահական մթերքների արտադրության աճ:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Արագածոտնի մարզը ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Արագածի, Թալինի նախկին վարչական շրջանները: Քաղաքներն են՝ Աշտարակ, Ապարան և Թալին:



Տարածքը	2 756 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.3 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	111
Գյուղատնտեսական նշանակության հողեր	218 239.8 հա
այդ թվում՝ վարելահողեր	54 152.7 հա

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիները՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում): Մարզում են գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են՝
 1) Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետի համապատասխան կարգադրությունների հիման վրա կազմակերպվել և համակարգվել են 2014թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքներում առկա անասնազվաքանակի համատարած հաշվառման աշխատանքները Անասնազվաքանակի տվյալներով Արագածոտնի մարզը

հանրապետությունում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Գեղարքունիքի, Շիրակի մարզերից հետո:

2) Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ:

Գյուղատնտեսություն

ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են մարզի ընդհանուր տարածքի 79.2 %-ը: Մարզի բնակլիմայական պայմաններն ըստ տարածաշրջանների, բազմազան են: Կան նախալեռնային, լեռնային և բարձրլեռնային գոտիներ: Դրանցով էլ պայմանավորված է գյուղատնտեսության կողմնորոշումը տարբեր տարածաշրջաններում: Ցածրադիր գոտում՝ Աշտարակի տարածաշրջանում և Թալինի նախալեռնային գոտիներում մշակվում են ջերմասեր մշակաբույսեր՝ խաղող, հնդավոր պտուղներ: Այստեղ տարվա ընթացքում խոտհարքերից ստացվում է 2-3 բերք, հացահատիկի տարածություններն օգտագործվում են երկու անգամ: Այս տարածքներում համեմատաբար զարգացած են ենթակառուցյունները, որը բարձրացնում է ճյուղի արդյունավետությունը: Բարձրադիր գոտիներում՝ Ապարանի, Արագածի և Թալինի լեռնային բնակավայրերում գյուղատնտեսության հիմնական ուղղվածությունը անասնապահությունն է: Սակայն, համեմատած ցածրադիր գոտու հետ, այստեղ այն համեմատաբար ավելի քիչ արդյունավետ է: Մարզի 54.0 հազ. հա վարելահողերից 2011թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսություններն օգտագործել են 33.1 հազար հա: Դրանից 24.31 հազար հեկտարը հացահատիկային մշակաբույսերն են: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 22.85 հազար հա վարելահող: Դրանք հիմնականում բարձրադիր գոտում են, տարածված են մեծ թեքությունների վրա, քարքարոտ են և և համեմատաբար հեռու են համայնքներից:

Ըստ հողային հաշվեկշռի, մարզում գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը բնութագրվում է աղյուսակում:

Աղյուսակ 5. Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կազմը բնորոշող ցուցանիշներն ըստ 2012-2014թթ. հաշվեկշռի տվյալների (հա)

Տարեթիվը	Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը	Այդ թվում՝		
		վարելահողեր	խաղողի այգիներ	պտղատու այգիներ
2012 թ.	218 239,8	54 016,3	1 838,4	2 966
2013 թ.	218 232,8	54 152,7	1 812,3	2 879,4
2014 թ.	218 225,4	54 149,9	1 811	2 897

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (63.2 %) և վարելահողերը (24.8 %):

Ինչպես արդեն նշվել էր, մարզի գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության՝ մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն ուղղությամբ և իր ցուցանիշներով զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Գեղարքունիքի և Շիրակի մարզերից հետո:



Աղյուսակ 6. Հացահատիկային և հատիկաբնույթի մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում 2014թ-ի տվյալներով

	Ցանքային տարածությունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն3:սյուն2)
Ա	1	2	3	4
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	188 695	185 760	5 905 586	31.8
Գեղարքունիք	44 102	44 102	1 413 135	32
Շիրակ	43 913	40 985	1 212 498	29,6
Արագածոտն	26 261	26 261	817 333	31,1

Ունենալով նախալեռնային գոտուն համապատասխան բնակլիմայական պայմաններ, այս մարզում լայն զարգացում է ստանում պտղաբուծությունը, ընդ որում պտղատու տեսակներից առավել մեծ տարածություն են զբաղեցնում հնդավորները: Պտղատու այգիների մեծությամբ Արագածոտնի մարզը հանրապետությունում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Արմավիրի և Արարատի մարզերից հետո:

Կարտոֆիլի ցանքատարածությունների տեսակետից մարզը զբաղեցնում է 1622 հա, միջին բերքատվությունը՝ 259 ց: Իր ցուցանիշներով հանրապետությունում զբաղեցնում է 5-րդ տեղը (2014 թ. տվյալներով):

Բանջարանոցային մշակաբույսերը մշակում են համեմատաբար քիչ տարածությունների վրա և մյուս մարզերի համեմատությամբ ապահովում են ցածր բերքատվություն:

Աղյուսակ 7. Պտղատու այգիների և հատապտղանոցների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում և Արագածոտնի մարզում 2014թ.-ի տվյալներով

	Ընդամենը տնկարկներ, հա	այդ թվում՝ բերքատու տարիքի, հա	Հավաքված բերքը, ցենտներ		1 հա-ի միջին բերքատվությունը ց (սյուն4: սյուն2)
			Ընդամենը	Այդ թվում՝ բերքատու տարիքի տնկարկներից	
Ա	1	2	3	4	5
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	40 129	35 986	2 910 379	2 908 101	81
Արմավիր	8 414	7 040	619 812	619 812	88
Արարատ	7 416	6 812	709 177	707 707	103,9
Արագածոտն	6 618	5 860	716 001	716 001	122,2
որից՝					
Հնդավորներ	3 137	2 431	635 433	635 433	261,4
Կորիզավորներ	1 795	1 753	34 670	34 670	19,8
Ընկուզապտուղներ	399	392	5 139	5 139	13,1
Մերձարևադարձայիններ	2	2	30	30	15
Հատապտուղներ	1 285	1 282	40 729	40 729	31,8

Պտղաբուծության զարգացման հետ մեկտեղ զարգացած է նաև սառնարանային տնտեսությունը: Ամենախոշոր սառնարաններից մեկը գտնվում է Արագածոտնի մարզում, որպեսզի պահպանվում են մարզում արտադրված պտղի գերակշիռ մասը: Բացի դրանից մարզում կան վերամշակող գործարաններ, որոնք դեռևս ունեն սահմանափակ հնարավորություններ գյուղատնտեսական հումքի վերամշակման և իրենց տեխնիկական միջոցների ընդլայնման ոլորտում, մասնավորապես հումքի և անասնապահական մթերքների վերամշակման գծով:



ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Այն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի (Շամշադինի) տարածաշրջանները և 5 քաղաքներ՝ Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ, Այրում: Մարզը հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին, հյուսիսում՝ Վրաստանին և արևելքում՝ Ադրբեջանին: Մարզն ունի մոտ 400կմ միջպետական սահման, որից 350կմ-ը Ադրբեջանի Հանրապետության հետ, 50-ը՝ Վրաստանի:



Մարզկենտրոնն է Իջևան քաղաքը: Մարզի տարածքը կազմում է 2 704ք.կմ, ընդհանուր հողատարածությունը՝ 270 393հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 105 931.2հա կամ ընդհանուր տարածքի 39.2%-ը: Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.1%-ը, բնակչության խտությունը 1ք.կմ-ի վրա կազմում է 50 մարդ: Մարզն ունի 5 քաղաքային և 57 գյուղական համայնքներ: Համայնքներից 43-ը ՀՀ կառավարության 17.11.1998թ.-ի թիվ 713 որոշմամբ ճանաչվել են սահմանամերձ:

ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Ծովի մակերևույթից ամենացածր կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 380մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրդուզ լեռն է՝ 2 993մ: Մարզը գտնվում է ՀՀ չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Քուռ գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է:

Մարզի կենտրոնով անցնում է Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 152.6կմ միջպետական նշանակության, 459.6 կմ

հանրապետական նշանակության (որից 282.6 կմ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության, 177 կմ-ը՝ մարզի ենթակայության), 189 կմ մարզային նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Աղստևի ձորով անցնում է Իջևան-Հրազդան երկաթուղու 70կմ հատվածը: Հյուսիսային սահմանի երկայնքով՝ Դեբեդի ավով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7կմ հատվածը:

Գյուղատնտեսություն

Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են այգեգործության, մեղվաբուծության, ծխախոտագործության, կերարտադրության զարգացման համար:

Գյուղատնտեսության ոլորտում գերակշռել է անասնապահության ճյուղը:

Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են այգեգործության, հատկապես կորիզավոր, հնդավոր, մերձարևադարձային պտղատեսակների, հատապտուղների և խաղողի արտադրության զարգացման համար: Զարգացման հեռանկար ունեն նաև մեղվաբուծությունը, ծխախոտագործությունը և կերարտադրությունը:



Մարզում արտադրվող հիմնական մշակաբույսերն են. կարտոֆիլ, խաղող, ցորեն, գարի, հաճար, եգիպտացորեն, ոլոռ, լոբի, բանջարեղեն, պտուղ, հատապտուղ:



Մարզն ունի մսակաթնային անասնապահության և հատկապես խոզաբուծության ուղղվածություն: Խոզերի զվառացման հանրապետության մարզերի մեջ զբաղեցնում է առաջատար դիրք:



Մարզի ցանքատարածությունները կազմում են հանրապետության 5.0%-ը, մինչդեռ 2007-ին այն կազմում էր 4.7%-ը: Հանրապետության մեջ մարզը զգալի մաս ունի տեխնիկական մշակաբույսերի մշակության տարածքով (39.1%), որից ծխախոտը՝ 45.5%:

Աղյուսակ 8. ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2014թթ. տվյալներով

	Ցանքային տարածությունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն3:սյուն2)
Գյուղատնտեսական մթերքների անվանումը	1	2	3	4
Հացահատիկ	9 571	9 571	355 378	37
Կարտոֆիլ	1 914	1 914	233 490	122
Բանջարեղեն	986	986	117 196	118,9
Բոստանային մշակաբույսեր	92	92	27 010	288,3

Մշակաբույսերի ընդհանուր ծավալում մարզում առավել բարձր տեսակարար կշիռ ունեն հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները (58.3%): Մարզի ընդհանուր ցանքատարածության մեջ զբաղեցնում են Տավուշի (37.4%) և Նոյեմբերյանի (34.6%) տարածաշրջանները:



**Աղյուսակ 9. Տավուշի մարզի բազմամյա տնկարկների տարածքները և կառուցվածքը
2014թ.-ի դրությամբ**

	Ընդամենը տնկարկներ, հա	այդ թվում՝ բերքատու տարիքի, հա	Հավաքված բերքը, ցենտներ		1 հեկտարի միջին բերքա- տվությունը ցենտներ (սյուն4:սյուն2)
			Ընդամենը	այդ թվում՝ բերքատու տա- րիքի տնկարկ- ներից	
Ա	1	2	3	4	5
Պտուղ և հատապտուղ	2 565	2 327	103 033	103 033	44,3
Խաղող	1 356	1 345	145 837	145 837	108,4

Մարզի բազմամյա տնկարկների տարածքը զբաղեցնում է հանրապետության 6.3%-ը, սակայն մի շարք պտղատեսակներով, մասնավորապես մերձարևադարձային տեսակներ (35.1%) և հատապտուղներ (7.2%), մարզը հանրապետությունում զգալի տեսակարար կշիռ ունի:

Ներկայացված ցուցանիշները վկայում են, որ Տավուշի մարզի գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած առաջնահերթ հիմնախնդիր է հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ավելացումը, որի համար անհրաժեշտ է առաջին հերթին անմշակ վարելահողերը դարձնել ինքնահոս եղանակով ոռոգելի, այնուհետև ոռոգվող տարածքներում հիմնել պտղատու և խաղողի այգիներ, ինչպես նաև նպաստել եկամտաբեր այլ մշակաբույսերի ներդրմանը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս- արևմուտքում: Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է՝ ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին: Տարածքը՝ 2681 քառ կմ է, Հայաստանի Հանրապետության ընդհանուր տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը 9% է: Մարզն ունի 131 բնակավայրեր, այդ թվում 3 քաղաքային և 128 գյուղական: Քաղաքային համայնքների թիվը 3-ն է, գյուղական համայնքների թիվը՝ 116: ՀՀ Շիրակի մարզն իր անունը ստացել է պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Շիրակ գավառից, որն ավելի ընդարձակ տարածություն էր գրավում:



Մարզկենտրոն Գյումրի քաղաքը գտնվում է Երևանից 120կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1550 մետր է: Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ շարունակվում է համարվել որպես Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաք: Շիրակի մարզի մյուս քաղաքներն են Արթիկը և Մարալիկը:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից է նաև այն, որ Վրաստանի տարածքը՝ ՀՀ Շիրակի մարզին հարող պետական սահմանի ամբողջ երկայնքով հիմնականում հայաբնակ է: Թուրքիայի հետ սահմանային Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն խոր մետր ծավալով խոշորագույնն է հանրապետությունում:

ՀՀ Շիրակի մարզը, լինելով ծովի մակերևույթից մոտ 1500-2000մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից մոտ 1 500-1 700 մ, իսկ 55-ը՝ 2000մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը, որտեղ ձմռանը օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է -46°C-ի:

Գյուղատնտեսություն

Մարզում կան 30221 գյուղացիական տնտեսություններ, որոնց միջոցով էլ կազմակերպվում է գյուղատնտեսական արտադրությունը: Դրանցից 350-ը ֆերմերային տնտեսություններ են, որոնցից 61-ը զբաղվում է անասնապահությամբ, 150-ը՝ դաշտավարությամբ, 200-ը՝ մեղվաբուծությամբ, 50-ը՝ գյուղմթերքի վերամշակմամբ (կաթ, միս, հացահատիկ), 39-ը՝ սերմնարտադրությամբ: Մարզի մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին է ընկնում 7.4 հա հողատեսք, որից վարելահող՝ 2.7 հա, խոտհարք՝ 0.36 հա, արոտ՝ 3.94 հա:

Մարզում բավականին լուրջ հիմնախնդիր է գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, որը հողերի չօգտագործման հիմնական պատճառներից մեկն է: Մարզում հաճախակի տեղի են ունենում բնական աղետներ, վաղ գարնանային հեղեղումներ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսավարողների շահերը:



Շիրակի մարզի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածության և ճյուղերի հարաբերակցության մասին պատկերացում է տալիս գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը: Ստորև ներկայացվող աղյուսակում (աղյուսակ 13) բերվում է ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը:

**Աղյուսակ 10. ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսական համախառն արտադրության
կառուցվածքը 2014թ.-ի դրությամբ**

	Ցանքային տարածու- թյունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն 3:սյուն2)
Գյուղատնտեսական մթերքների անվանումը	1	2	3	4
Հացահատիկ	43 913	40 985	1 212 498	29,6
Կարտոֆիլ	4 268	4 268	1 075 064	251,9
Բանջարեղեն	1 698	1 698	529 536	311,9
Պտուղ	518	508	89 741	88 933

Մարզը ունի անասնապահության և բուսաբուծության ուղղվածություն:
Հարուստ փորձ է կուտակվել կարտոֆիլագործության զարգացման համար: Վերջին տարիներին մարզում վարվում է ինտենսիվ կարտոֆիլագործություն: Այստեղ բավարար ուշադրություն է դարձվում սորտաթարմացմանը, ոռոգմանը, պարարտանյութերի թարմացմանը:

Շիրակի մարզը դարեր ի վեր դիտվել է նաև որպես հացի շտեմարան: Մարզում գործում է Գյումրու «Սելեկցիոն Կայան» ՓԲԸ, որը որպես գիտարտադրական ձեռնարկություն մեծ ներդրում է ունեցել և ունի մարզի ու հանրապետության գյուղատնտեսության բարձրորակ սերմացուով ապահովելու խնդիրը:



Գյուղատնտեսության զարգացման կարևոր պայման է գյուղտեխնիկայով համայնքների ապահովվածությունը, որն ունի միջին մակարդակ: Մարզում առկա մեքենատրակտորային պարկը տարիներ շարունակ չի թարմացվել, և մեքենաները շահագործվում են 20 տարուց ավելի: Անմխիթար վիճակում են հատկապես հացահավաք կոմբայնները, որոնք տալիս են բերքի 10-15% կորուստներ:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավարևելյան վերջույթում: Այն ընդգրկում է երկու նախկին վարչական շրջաններ՝ Եղեգնաձորի և Վայքի վարչական շրջանները: Սահմանակից է Սյունիքի և Գեղարքունիքի մարզերին, Արցախի Հանրապետությանը, Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը (Ադրբեջան) և Արարատի մարզին: Մարզկենտրոնը Եղեգնաձոր քաղաքն է, գտնվում է Երևանից 124 կմ

հեռավորության վրա: Մարզի տարածքը 2308 քմ է (հանրապետության տարածքի 7.8 %), բնակչությունը 55.8 հազար (հանրապետության ազգաբնակչության 1.7 %), քաղաքային բնակչությունը 19,3 հազար, գյուղականը՝ 36.5, բնակչության խտությունը 1 ք կմ-ի վրա կազմում է 24 մարդ: Տարածաշրջանը գտնվում է ծովի մակերևույթից 1300-2800 մ բարձրության վրա: Որպես կապող հանգույց մարզ, Վայոց Ձորի տարածաշրջանով է անցնում Երևան-Մեղրի և Երևան-Ստեփանակերտ մայրուղին, միաժամանակ այն կապում է Գեղարքունիքի և Վայոց Ձորի ստրատեգիական մայրուղին:

Գյուղատնտեսություն

ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Ազգաբնակչության 65,0 %-ը կազմում է գյուղական բնակչությունը: Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների և այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով:

Բուսաբուծությունը ընդհանուր գյուղատնտեսական համախառն արտադրանքի մեջ կազմում է 33.9 % նախկինում և այժմ բուսաբուծության առաջատար ճյուղեր են համարվում պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և հացահատիկի արտադրությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են մարզում հիմնական մշակվող մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության և համախառն բերքի ծավալները 2014թ-ին:

Աղյուսակ 11. ՀՀ և Վայոց Ձորի մարզի բանջարանոցային մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2014 թվականին

	Ցանքային տարածու- թյունը, հա	Ընդհանուր բերքահա- վաքի տարա- ծությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հա-ի միջին բերքատվու- թյունը, ցենտներ (սյուն3:սյուն 2)	Բացի այդ հավաքած է բերք կրկնակի, միջշարքայի և ցանքերից, ցենտներ	Ընդամենը հավաքված է բերք, ցենտներ (սյուն3+սյուն 5)
Ա	1	2	3	4	5	6
Կաղամբ բոլոր տեսակի	16	16	2 783	173,9	-	2 783
Վարունգ	56	56	10 652	190,2	-	10 652
Լոլիկ	82	82	16 612	202,6	-	16 612
Սեղանի ճակնդեղ	10	10	1 724	172,4	-	1 724
Սեղանի գազար	13	13	2 109	162,2	-	2 109
Գլուխ սոխ	118	118	26 381	223,6	-	26 381
Սխտոր	22	22	3 503	159,2	-	3 503
Այլ բանջարեղեն*	90	90	12 812	142,4	-	12 812
Վայոց Ձորի մարզում, ընդամենը	407	407	76 576	188,1	-	76 576
Հայաստանի Հանրապետու- թյուն, ընդամենը	26 412	26 343	9 232 922	350,5	271 162	9 546 268

*) Զանազան բանջարային կանաչեղեն, սմբուկ, տաքդեղ և այլն:

Աղյուսակ 1-ից երևում է, որ մարզում բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները այդքան էլ մեծ չեն, որովհետև հիմնականում մշակվում են անջրդի վարելահողերի վրա (70 %), որտեղ չի կիրառվում ցանքաշրջանառություն ու լիարժեք պարարտացում, ցածր է հողի բնական բերրիությունը, որի արդյունքում բերքատվությունը լինում է ցածր և տնտեսապես ոչ շահավետ:



Ցածրադիր և միջին գոտում կարևորագույն և հեռանկարային նշանակություն ունի պտղաբուծությունը և խաղողագործությունը: Ներկայումս մարզում գործում են փոքր ու միջին մեծության ինը գինու գործարաններ: «Արենի» սորտի խաղողից պատրաստված «Արենի» և «Վերնաշեն» տեսակի գինիները մեծ ճանաչում ունեն: Ավելացնենք նաև, որ խաղողագործությունը մարզում հեռանկարային ճյուղ է դրա զարգացման գործում էական դժվարություններ չկան:



Աղյուսակ 12. ՀՀ և Վայոց Ձորի մարզի պտղատու այգիների և հատապտղանոցների ընդամենը տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2014թ.-ի տվյալներով

	Ընդամենը տնկարկներ, հա	այդ թվում՝ բերքատու տարիքի, հա	Հավաքված բերքը, ցենտներ		1 հեկտարի միջին բերքատվությունը ցենտներ (սյուն4:սյուն2)
			Ընդամենը	Այդ թվում՝ բերքատու տարիքի տնկարկներից	
Ա	1	2	3	4	5
Հնդավորներ	855	810	30 253	30 253	37,3
Կորիզավորներ	858	754	21 805	21 805	28,9
Ընկուզապտուղներ	388	348	1 876	1 876	5,4
Հատապտուղներ*	54	54	499	499	9,2
Վայոց Ձորի մարզում, ընդամենը	2 155	1 966	54 433	54 433	80,8
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	40 129	35 986	2 910 379	2 908 101	887,9

*) Գետնամորի, ելակ, հաղարջ և այլն:

Ծրագրավորվել է 2013-18թթ.-ին մարզում հիմնել 230 հա պտղի և 180 հա խաղողի նոր այգիներ:

Այսպիսով մարզի գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ուղղություններն են՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը և անասնապահությունը:

Մարզի գյուղատնտեսությունը բնակլիմայական պայմանների առումով գտնվում է ռիսկային գոտում և տարերային աղետների (ցրտահարություն, ջրհեղեղներ, կարկտահարություն, երաշտ) պատճառով մեծ վնաս են կրում գյուղացիական տնտեսությունները և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտները: Հետևաբար շատ կարևոր է ապահովագրական համակարգի ստեղծումը, որը ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում ապահովագրական համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը:

Մարզի գյուղատնտեսական արտադրության մեջ գերակշռող ճյուղը անասնաբուծությունն է, որի տեսակարար կշիռը համախառն արտադրանքի մեջ կազմում է 66.1 %: Միջին և բարձր գոտիներում գյուղացիական տնտեսությունների զբաղվածության հիմնական մասը բաժին է ընկնում անասնապահությանը:

Համայնքներում մինչև 2018թ. կառուցվող և վերանորոգվող ոռոգման ներքին ցանցերը հնարավորություն կտան կրճատելու ոռոգման ջրի կորուստները և ջրօգտագործողները կունենան կայուն ջրամատակարարում, որի արդյունքում կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

Վայոց Ձորի մարզի գյուղատնտեսության զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի հետևողական ինտենսիվացումը, որի շնորհիվ կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և կնպաստի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճի ու աղքատության կրճատմանը: Մարզի գյուղատնտեսության հետագա զարգացումը նախատեսվում է ցածրադիր և միջին գոտում խաղողի ու պտղատու այգիների հիմնում՝ նոր տեխնոլոգիաներով, բարձրադիր գոտում նախատեսվում է զարգացնել խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը:

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան


Տարածքը՝ 2076 քառ. կմ

Բնակչությունը՝ 254700 մարդ (2014թ. հունվարի 1-ի տվյալներով)

Քաղաքային՝ 138000 (54,2%), գյուղական՝ 116700 (45,8%)

Համայնքների թիվը՝ 67, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:



Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Կոտայքով են հոսում նաև Գետառն ու Ագատը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունի Ակնա լիճը (3032 մ բարձրություն), որով ջրարբիացվում են ամառային արոտավայրերը: Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաձյուղերն ու լավային հոսքերը: Տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան բուսական եւ կենդանական աշխարհներով: Կլիմայական գոտին խառն է, իսկ աշխարհագրական դիրքն, ընդհանուր առմամբ, նպաստավոր: Մարզի տարածքով են անցնում Երևան-Շոթա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 45 կմ է: Ազգաբնակչության 97,6%-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ և այլն:

Մարզը սահմանամերձ չէ և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզում ըստ բարձունքային գոտիականության հանդիպում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 1920 ժամից մինչև 2400 ժամի սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 75: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -7.9°C -ից մինչև -19.8°C է, հուլիս-օգոստոսին՝ $13.0-25.4^{\circ}\text{C}$: Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Հրազդանում (-31°C), առավելագույնը՝ Եղվարդում (32°C): Տեղումների տարեկան քանակը տատանվում է 310 մմ - մինչև 726 մմ: Տեղումների առավելագույն մասը դիտվում է ապրիլին, նվազագույնը՝ օգոստոսին: Աշնանը դիտվում է առատ տեղումների երկրորդ շրջանը:

Գյուղատնտեսություն



Կոտայքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզում գործում են 32222 ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքներ (կաթ, միս, հացահատիկ, պտուղ) վերամշակող 30 կազմակերպություններ:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը կազմում է 80-85%, ընդ որում խոտհարքեր՝ 90% (առանձին համայնքներում այն կազմում է մինչև 100%), արոտավայրեր՝ 100%, վարելահողեր՝ 50-55%: Գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 76.8%-ը (154639.9 հա):

Մարզի 37.8 հազ. հա վարելահողերից 2013թ. ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների կողմից օգտագործվել է 17.1հազ. հա, որից 12.1հազ. հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 20.7 հազ. հա վարելահող: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտիներում և բնակավայրից զգալի հեռավորության վրա, քարքարոտ են ու դժվարամշակ:

Մարզի գյուղատնտեսության մասնագիտացումը: Կոտայքի արզն ունի անասնապահության (կաթ, միս) և բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ) արտադրության ուղղվածություն: Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է նաև թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բուսաբուծություն

Աղյուսակ 13. ՀՀ և Կոտայքի մարզի հացահատիկային և հատիկաբերող եղենային մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2014թ-ի տվյալներով

	Ցանքային տարածությունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն3:սյուն2)
Ա	1	2	3	4
Աշնանացան հացահատիկային մշակաբույսեր, ընդամենը	5 704	5 704	141 965	24,9
Աշնանացան ցորեն	5 701	5 701	141 897	24,9
Աշնանացան գարի	3	3	68	22,7
Գարնանացան հացահատիկային և հատիկաբերող եղենային մշակաբույսեր, ընդամենը	5 864	5 864	133 426	22,8
Գարնանացան ցորեն	394	394	8 731	22,2
Գարնանացան գարի	2 715	2 715	63 288	23,3
Վարսակ	104	104	2219	21,3
Հաճար	2 651	2 651	59 188	22,3
Հատիկաբերող եղենային մշակաբույսեր, ընդամենը	160	160	4 172	26,1
Ոլոռ հատիկի համար	5	5	152	30,4
Լոբի հատիկի համար	147	147	3 857	26,2
Ոսպ	5	5	95	19
Սիսեռ	3	3	68	22,7
Կոտայքի մարզում, ընդամենը	11 728	11 728	279 563	23,8
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	188 695	185 760	5 905 586	31,8

Սերմնաբուծություն: Ինչպես հանրապետության, այնպես էլ Կոտայքի մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և հիմնական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա: Ներկայումս սերմնաբուծական և տնկարանային տնտեսությունների համակարգը անկատար է և կատարելագործման անհրաժեշտություն ունի:

Հանրապետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության և առաջին հերթին բուսաբուծության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում վճռորոշ դեր ունի բարձր վերարտադրության սերմերի և որակյալ տնկանյութի արտադրության կազմակերպումը: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացմանն ուղղված ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ միջոցառումների իրականացում, ինչը հնարավորություն կընձեռի խթանել սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումը և պայմաններ ստեղծել մարզում բարձրորակ սերմերի արտադրության ու օգտագործման համար:

Մարզում հացահատիկի և բանջարանոցային կուլտուրաների երաշխավորված և կայուն բերք ապահովելու նպատակով մարզպետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է դարձվել ցանվող սերմանյութի սերմաթարմացման, սերմափորձարկման և սերմնաբուծության զարգացման ոլորտի վրա, ինչպես նաև տնկարանային տնտեսության աշխատանքների կազմակերպմանը:

Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների արտադրության համար: Առաջիկա ծրագրային միջոցառումները իրականացնելիս պետք է հաշվի առնել նշված նախընտրելի մասնագիտացումը:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Արարատի մարզի տարածքը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի շուրջ 7% -ը. իսկ ազգաբնակչությունը հանրապետության ամբողջ ազգաբնակչության 8.6%-ը: Արարատի մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում: Մարզը հյուսիսից սահմանակից է մայրաքաղաքին, Արմավիրի և Կոտայքի մարզերին, արևելքից՝ Գեղարքունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ Վայոց ձորի մարզին և հարավից պետական սահմանով սահմանակից է Թուրքիային: Մարզկենտրոնը՝ քաղաք Արտաշատ:



Տարածքը	2 096 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7%
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	93
Գյուղատնտեսական նշանակության հողեր	156 962 հա
այդ թվում՝ վարելահողեր	25 465 հա

Արարատի մարզի տարածքն ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիների: Ունի չոր և խիստ ցամաքային կլիմա: Ձմռանը համեմատաբար ցուրտ է, հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10°C-ից մինչև 20°C ցուրտ, իսկ ամռանը շոգ է լինում, հուլիս ամսին օդի միջին ջերմաստիճանը 28°C-ից մինչև 33°C է (առավելագույնը 41°C) :

Արարատյան դաշտավայրը գրավում է մարզի տարածքի 40%-ը: Մարզն ընդգրկում է Ագատ և Վեդի գետի ջրավազանը, Գեղամա լեռնաշղթայի հարավ արևմտյան լանջերը՝ մինչև կատարային գոտին: Մարզի ամենաբարձր կետը Սպիտակասարի գագաթն է՝ 3555մ բարձրությամբ:

Մարզում են սկիզբ առնում Ագատ և Վեդի գետերը: Մարզի տարածքով են անցնում Արաքս և Հրազդան գետերը:

ՀՀ Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Ղարաբաղ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին:

Գյուղատնտեսություն

Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Գյուղատնտեսության տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ծավալում կազմում է 14.9%:

Մարզը գտնվելով Արարատյան հարթավայրում ունի առանձնահատուկ պայմաններ և մասնագիտացված է այդ պայմաններին համապատասխան գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Այն ունի բարենպաստ պայմաններ բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության համար, միաժամանակ հնարավորություններ կան ջերմոցային տնտեսությունների զարգացման համար: Մշակվում է հացահատիկ, կորիզավոր պտուղներ, խաղող, բանջարեղեն:

Ամենակարևոր ճյուղը հանդիսանում է խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Խաղողի ընդհանուր տարածությունը հանրապետությունում կազմում են շուրջ 17 000 հա, որից միայն 5 000 հեկտարը միայն Արարատի մարզում: Միաժամանակ, եթե հանրապետությունում խաղողի միջին բերքատվությունը կազմում է 150g, ապա Արարատի մարզում բերքատվությունը կազմում է 200g: Եթե ՀՀ-ում արտադրվում է 200 000 տ խաղող, ապա միայն Արարատի մարզում՝ 93 000 տ:



Աղյուսակ 14. Խաղողի այգիների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում և Արարատի մարզում 2014թ-ի տվյալներով

	Ընդամենը տնկարկներ, հա	այդ թվում՝ բերքատու տարիքի, հա	Հավաքված բերքը, ցենտներ		1 հեկտարի միջին բերքատվությունը ցենտներ (սյուն4:սյուն2)
			Ընդամենը	այդ թվում՝ բերքատու տարիքի տնկարկներից	
Ա	1	2	3	4	5
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	17 215	16 323	2 613 249	2 574 299	157,7
Արարատ	5 083	4 951	1 122 148	1 083 198	218,8

Նույնպիսին է վիճակը նաև պտղաբուծության ոլորտում, սակայն վերջին տարիներին ինչ-որ տեղ առաջընթացը նվազել է: Պտղատու այգիների տարածքները շուրջ 7 400 հա է, ՀՀ-ում՝ 40 000 հա: Սակայն բերքատվությունը 1հա-ի հաշվով ՀՀ-ու կազմում է շուրջ 70-80ց, իսկ Արարատի մարզում՝ 105ց:



Աղյուսակ 15. Պտղատու այգիների և հատապտղանոցների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում և Արարատի մարզում 2014թ-ի տվյալներով

	Ընդամենը տնկարկներ, հա	այդ թվում՝ բերքատու տարիքի, հա	Հավաքված բերքը, ցենտներ		1 հեկտարի միջին բերքատվությունը ցենտներ (սյուն4:սյուն2)
			Ընդամենը	այդ թվում՝ բերքատու տարիքի տնկարկներից	
Ա	1	2	3	4	5
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	40 129	35 986	2 910 379	2 908 101	80,8
Արարատ	7 416	6 812	709 177	707 707	103,9

Արարատի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է 52500 գյուղացիական տնտեսությունների, 8 առևտրային կազմակերպությունների միջոցով, որոնցից 3-ը՝ բուսաբուծությամբ և 5-ը՝ անասնապահությամբ զբաղվող: Մարզում գործում է գյուղատնտեսական մթերքների վաճառքի 4 շուկաներ: Մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակող ձեռնարկություններից առանձնանում են 17 գինու-կոնյակի արտադրության, 4 պահածոների՝ (Արտաշատի «Արտֆուդ», Արարատի «Բորոդինո», Մասիսի «Ալիշան», Ավշարի «Ավշարպրոդ») և ծխախոտի արտադրության «Մասիս Տոբակո» գործարանները:



ՀՀ Արարատի մարզի ազգաբնակչության 70%-ից ավելին բնակվում է գյուղական վայրերում և վերջիններիս տնտեսական կենսունակությունը պայմանավորվում է գյուղատնտեսական գործունեությամբ:

Արարատի մարզը համարվում է գյուղատնտեսական մարզ և որոշիչ դեր ունի հանրապետության գյուղատնտեսության տարեկան համախառն արտադրանքի ընդհանուր արդյունքում: Վերջին տարիներին էական առաջընթաց է գրանցվել մարզի գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալների մեջ, մասնավորապես՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2013 թ-ին կազմել է 136.4 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 10%-ով և կազմել է հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի 14.8% - ը:

Արարատի մարզը մյուս մարզերի համեմատությամբ, ունի բարձր արտադրական և տնտեսական ցուցանիշներ: Հաշվի առնելով ստեղծված պայմաններն ու նախադրյալները Արարատի մարզում անհրաժեշտ է ըստ առանձին տնտեսական շրջանների որոշել մասնագիտացման ուղղությունները: Նպատակահարմար է որպեսզի Արարատի և Արտաշատի տարածաշրջանները մասնագիտացվեն խաղողի և պտղի արտադրությամբ: Որպես զուգորդող ճյուղ նաև կաթնամսային տավարաբուծությունը: Իսկ Մասիսի տարածաշրջանը պետք է

մասնագիտացվի բանջարեղենի արտադրությամբ և զուգակցվի կաթնամսային տավարաբուծության ուղղության հետ:

Աղյուսակ 16. Բանջարանոցային մշակաբույսերի ցանքային տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, ընդամենը ՀՀ-ում և Արարատի մարզում 2014թ.-ի տվյալներով

	Ցանքային տարածությունը, հա	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա	Հավաքված բերքը, ցենտներ	1 հեկտարի միջին բերքատվությունը, ցենտներ (սյուն 3:սյուն2)	Բացի այդ հավաքած է բերք կրկնակի, միջշարքային ցանքերից, ցենտներ	Ընդամենը հավաքված է բերք, ցենտներ (սյուն3+սյուն5)
Ա	1	2	3	4	5	6
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	26 412	26 343	9 232 922	350,5	271 162	9 546 268
Արարատ	6 533	6 508	3 163 779	486,1	231 276	3 409 898
Կաղամբ բոլոր տեսակի	246	246	126 115	512,7	-	126 115
Վարունգ	534	534	256 079	479,5	52 340	308 419
Լոլիկ	3 177	3 177	1 677 405	528	85 213	1 762 618
Սեղանի ճակնդեղ	52	52	23 539	452,7	-	23 539
Սեղանի զազար	15	15	4 786	319,1	-	4 786
Գլուխ սոխ	217	217	80 212	369,6	-	80 212
Սխտոր	105	105	24 304	231,5	-	24 304
Այլ բանջարեղեն*	2 161	2 161	970 974	449,3	93 723	1 064 697

*) Զանազան բանջարային կանաչեղեն, սմբուկ, տաքդեղ և այլն:

Բանջարանոցային մշակաբույսերի արդյունքներով Արարատի մարզը ՀՀ-ում զբաղեցնում է առաջատար դիրք:

Արարատի տարածաշրջանի գյուղատնտեսությունը տարվում է ամբողջովին ոռոգելի պայմաններում, որի համար առկա են որոշակի պայմաններ: Հիմնականում ոռոգման միջոցներ են հանդիսանում Արտաշատի ջրանցքը, որը սկիզբ է առնում Հաղթանակ կամրջի կողմից, Վեդի գետը, ինչպես նաև շուրջ 280 խորքային հորեր: Դրանց մի մասը ապահովում են մեխանիկական եղանակով, մյուսը՝ արտեզյան:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՀՀ Արմավիրի մարզը, որպես առանձին վարչատարածքային միավոր, ձևավորվել է 1995թ-ի դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի նախկին շրջանների բազայի վրա:



Տարածքը	1 242 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	4%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	94
Գյուղատնտեսական նշանակության հողեր	97 067 հա
այդ թվում՝ վարելահողեր	41 91 հա

ՀՀ Արմավիրի մարզը տարածքի մեծությամբ ամենափոքրն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 4.2%-ը):

ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է հանրապետության արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաք Երևանին, հարավ-արևելքից ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային:

Արմավիրի մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված, առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային: Սահմանի երկարությունը 130.5կմ է Թուրքիայի հետ, որն ընդգրկում է 8 համայնք՝ Փշատավան, Բազարան, Երվանդաշատ, Մարգարա, Բերքաշատ, Արագափ, Արաքս (Էջմ.) և Ջանֆիդա՝ ընդհանուր առմամբ շուրջ 13.5 հազար բնակչությամբ:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ, Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին:

ՀՀ Արմավիրի մարզն ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի տարածաշրջանները, Արմավիր, Մեծամոր, Վաղարշապատ քաղաքները: Մարզի մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 267.2 հազ. մարդ, Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.9%-ը:

Արմավիրի պատմական մարզը գտնվում է Արագած և Արարատ լեռների միջև և հանդիսանում է Արարատյան դաշտի մի մասը, որը Հայկական լեռնաշղթայի 40 դաշտավայրերից ամենաբերքատուն և ամենամեծն է: Արմավիրի դաշտավայրն ընկած է Շիրակի սարահարթի հարավային մասից դեպի Ախուրյան գետի ներքին հոսանքը, այն ամբողջությամբ կազմված է լավային ապարներից: Վերջինիս շարունակությունը հանդիսանում է Հոկտեմբերյանի տափաստանը: Արմավիրի մարզը նախալեռնային մասում տարածվում է մինչև Արագած լեռան լանջերը՝ մինչև 1600մ բարձրությամբ: Համեմատաբար ավելի ցածր տեղերում՝ գորշ և մոխրագույն հողեր են, որոնք երբեմն խառնվում են աղային և աղուտային հողերի հետ: Մարզում գերակայում են շագանակագույն հողերը, որոնք ավելի բարձր գոտիներում փոխվում են սև հողերի: Այդ հողերը ծածկված են բազմատեսակ տափաստանային բուսականությամբ:

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա:

Արմավիրի մարզը նորանկախ Հայաստանի պարենի շտեմարանն է՝ դառնալով երկրի անվտանգության երաշխավորներից մեկը:

Գյուղատնտեսություն

ՀՀ Արմավիրի մարզի բնակչության զբաղվածության մեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: 2014թ-ի հուլիսի 1-ի դրությամբ մարզի բնակչությունը եղել է 267.2 հազ. մարդ, որից 181.9 հազ. մարդը կամ մարզի բնակչության 68.1%-ը հանդիսանում է գյուղական բնակչությունը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2012թ-ի հրապարակած տվյալներով մարզում գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը կազմել է 91.1 հազ. մարդ:

2014թ-ին մարզի գյուղատնտեսության տեսակարար կշիռները ՀՀ գյուղատնտեսության ընդհանուր ծավալում կազմել է 17.5%:

Արմավիրի մարզում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է 50634 գյուղացիական տնտեսությունների միջոցով: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մարզի վարչական տարածքի 78.1%-ը:

Արմավիրի մարզը աչքի է ընկնում բարձր զարգացած գյուղատնտեսությամբ և վերամշակող արդյունաբերությամբ: Մարզի բնատնտեսական պայմանները խիստ

նպաստավոր են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության և անասնաբուծության զարգացման համար: Այս տարածաշրջանում հնարավոր է մշակել պտղատու և խաղողի այգիներ, բանջարեղեն, բոստանային մշակաբույսեր, ինչպես նաև տավարաբուծական, ոչխարաբուծական, թռչնաբուծական մի շարք արտադրանքներ:



Ներկայումս մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 7000 հեկտարը, որը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսության արտադրության մեջ վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղի և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ:



Վերջին տարիների գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի, ներկայացված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 17. ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2013-2014թթ.

Մշակաբույսի անվանումը	Տարթիվը	Ցանքատարածությունը/հա	Բերքատվությունը/հա	Համախառն բերքը/ հազ. Տոննա	այդ թվում՝ կրկնակի միջշարային տարածություններից հավաքած
Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսեր	2013	6 041	36	22	-
	2014	7 084	41	30	-
Կարտոֆիլ	2013	1 216	268	35	3
	2014	1 339	322	43	-
Բանջարանոցային մշակաբույսեր	2013	9 007	358	342	19
	2014	9 703	373	360	-
Բոստանային մշակաբույսեր	2013	3 499	379	133	-
	2014	3 681	412	152	-
Պտուղի հատապտղի տնկարկներ	2013	8340/6560	114	75	-
	2014	8 414	88	61	-
Խաղողի տնկարկներ	2013	7136/6126	157	96	-
	2014	7 119	167	107	-

Արմավիրի մարզը հանրապետությունում բարձր բերքատվություն ապահովող մարզերից է: Հացահատիկի միջին բերքատվությունը վերջին տարիներին տարանվել է 35-45g միջև, խաղող՝ մինչև 200g, պտուղ՝ 100-120g, կարտոֆիլ՝ 300-310g:

Մարզի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է քաղաքականությունը իրականացնել բարձրարժեք մշակաբույսերի մշակության գծով:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոլերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):